ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0270/02/24

ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ, ԳՐԱՍԽԱԼՆԵՐԸ ԵՎ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ՝ դատավոր Ա. Աթանեսյանը

2024 թվականի հունվարի <<23>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության (*պետական գրանցման համարը՝ 282.110.1339826, ՀՎՀՀ՝ 01059264, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Խուդյակովի փ. 175/1, էլ. փոստ՝ COWPERFOOD@YANDEX.COM, այսուհետ նաև՝ Հայցվոր)* ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության *(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104, էլ. փոստ՝ tvtender@sns.am, այսուհետ նաև՝ Պատասխանող)՝* ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալի 25.12.2023 թվականին կայացրած որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

ՊԱՐԶԵՑԻ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվորի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալի 25.12.2023 թվականին կայացրած որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 22.01.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

2. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտում թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել, իսկ դատարանն իր նախաձեռնությամբ այդ գործողությունները կատարում է դատական ակտի կայացման պահից մինչև դրա կատարումը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հարցը դատարանը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունն առաջին ատյանի դատարանը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

Սույն գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, 22.01.2024 թվականին որոշման եզրափակիչ մասում եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշել է «**2024 թվականի փետրվարի 06-ին**»: Դատարանը փաստում է, որ թույլ է տրվել վրիպակ, մասնավորապես՝ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը՝ «**2024 թվականի փետրվարի 26-ին**» փոխարեն նշվել է «**2024 թվականի փետրվարի 06-ին**»:

Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 22.01.2024 թվականի որոշման եզրափակիչ մասում եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր «**2024 թվականի փետրվարի 06-ին**»-ի փոխարեն պետք է կարդալ «**2024 թվականի փետրվարի 26-ին**»:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 360-362-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ ԵԴ2/0270/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից 2024 թվականի հունվարի 22-ի որոշման եզրափակիչ մասում թույլ տրված վրիպակը սեփական նախաձեռնությամբ ուղղել և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր «**2024 թվականի փետրվարի 06-ին**»-ի փոխարեն կարդալ «**2024 թվականի փետրվարի 26-ին**», ու որոշումն այսուհետ կարդալ սույն որոշմամբ կատարված վրիպակների ուղղումը պարտադիր հաշվի առնելով:
2. Որոշումն ուղարկել գործին մասնակցող անձանց:
3. Դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Digitally signed by
ATANESYAN ANI
5101901431
Date: 2024.01.24 11:17:17
AMT